ները» դառել են «Զօլանեանի յօղուածներ»։ Եւ այնքան տեղը պ. Նուշիրվանը համոզուած է եղել թէ չի սխալւում որ մինչև անգամ հարկ է համարել «Баку»-ի խեղճ ընթերցողներին բացատրել փակագծերի մէջ որ այդ Պատկանեանը՝ Գամառ-Քաթիպան է... Չէ՞ր կարելի արդեօք յանուն բարեխղճութեան պահանջել որ աւելի լուրջ վերաբերուեն այդ պարոնները իրանց ստանձնած չիչերոնիների և մենտորների լինելու դերերին։ Եթէ ուզում էք օտարացած հայերին ծանօթացնել մայրենի մամուլին՝ նախ և առաջ բարեհաճէք ինքներդ կարդալ և ապա միայն ուրիշներին մասնակից անել ձեր խոհերին և կարծիքներին, այլապէս դա մի տգեղ օյինբազութիւն է, մեծապատիւ պարոններ։

---

## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԺԸՆԵՎ.—պ. Ա. Ա.—Նամակը եւ «Դէպի Անի» գրուածքի շարունակութիւնը ստացանք։

ՆՈՐ-ՋՈՒՂԱ. Մ. Կ.—Զափազանց ուշացնում էք ձեռագրերի առաքումը։

ՆՈՐ-ՋՈՒՂԱ. Բ. վ. Վ.—Ձեր ուզած դասագրքից ուղարկուած են Надежда-ով 200 օրինակ, կազմուած։

ԹԻՖԼԻՍ.—Ալ. Թ.—Ձեզանից վաղուց է տեղեկութիւն չունենք։

---

## ՎՐԻՊԱԿՆԵՐ

«Մուրճ»--ի № 6-ում։

| Էջ | տող | տպուած է | պէտք է լինի |
|---|---|---|---|
| 75 | 10 | պնդեց | պնդել |
| 77 | 13 | 1855—1895 | 1885—1895 |
| 80 | 22 | պրօլետարիային | պրօլիտարիատին |
| 71 | 22 | «հատարիմ» | «հաւատարիմ» |

«Մուրճ»-ի № 7-ում

| | | | |
|---|---|---|---|
| 146 | 4 վ. | Այ էդ | Այդ է |